

# ԵՐՈՍԱԿԾԹՁՈՒԹՅՈՒՆ

## ՆԱՐԻՆԵ ԷԼԻԶԱՐՅԱՆ

«Արմենիամ հոսպիտալիքի հողինգի»  
ֆինանսական մեջեր

### ՀՀ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՄԱՐԴԱՅԻՆ ԶԲՈՍԱԾՐՁՈՒԹՅԱՆ ԾՈՒԿԱՅՈՒՄ

ՀՀ զբոսաշրջության առկա վիճակը և դրա վրա ազդող մի շարք գործուներ ուղղակի ազդեցություն ունեն զբոսաշրջության մրցունակության վրա: Ուստի ակնհայտ իմանալիքներին անդրադառնալու համար անհրաժեշտ ենք համարում նախևառաջ դիտարկել ՀՀ զբոսաշրջության մրցակցային դիրքը միջազգային շուկայում:

Զբոսաշրջության համաշխարհային շուկայում Հայաստանը զգալիորեն զիջում է իր մրցակիցներին: Այդ են վկայում համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակված տվյալները: Այսպես, համաձայն 2011 թ. զբոսաշրջության մրցունակության գեկույցի՝ Հայաստանն այս դրություն 90-րդն է 139 երկրների շարունակությունը:<sup>1</sup> Զբոսաշրջության մրցունակության համարիվը, որը համարդանիտրեն գնահատում է երկրների մրցունակությունը զբոսաշրջության բնագավառում, բաղկացած է 3 երահամարվերից, որտեր հաշվարկվում են 14 հենապյուների գնահատականների (1-7 միավոր) հիման վրա (գծապատկեր 1):<sup>2</sup>


<b>Ենթահամարի Ա</b> Զբոսաշրջության կանոնակարգող դաշտ	<ul style="list-style-type: none"><li>• Օրենքներ եւ կանոնակարգեք</li><li>• Շրաբնամիջավայրի կայունացքուն</li><li>• Ասպահովություն եւ անվանագույթուն</li><li>• Սահմանադրության պայմաններ եւ առողջապահություն</li><li>• Զբոսաշրջության գերակայությունը</li></ul>
<b>Ենթահամարի Բ</b> Զբոսաշրջության բիզնես միջավայր եւ ենթակառուցվածքներ	<ul style="list-style-type: none"><li>• Օրային տրանսպորտի ներթակառուցվածք</li><li>• Վերգետնայա տրանսպորտի ներթակառուցվածք</li><li>• Զբոսաշրջության ենթակառուցվածք</li><li>• ՏՏԸ ենթակառուցվածք</li><li>• Զբոսաշրջության գնային մրցունակությունը</li></ul>
<b>Ենթահամարի Ը</b> Զբոսաշրջության մարդկային, մշակութային երական ռեսուրսներ	<ul style="list-style-type: none"><li>• Մարդկային ռեսուրսներ</li><li>• Բնակչության զբոսաշրջության ընկալումը</li><li>• Բնական ռեսուրսներ</li><li>• Սշակութային ռեսուրսներ</li></ul>

**Գծապատկեր 1. Զբոսաշրջության մրցունակության համարիվ և դա կազմող  
14 հենապյուների գնահատականներն ու գրաղեցրած տեղը՝  
ըստ 2011 թ. զբոսաշրջության մրցունակության գեկույցի**

<sup>1</sup> Տես՝ Հայաստանն ըստ 2011 թ. զբոսաշրջության մրցունակության գեկույցի, «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, մամուլի հաղորդագր., Եր., 7 մարտի 2011 թ., էջ 4:

<sup>2</sup> Տես՝ [www.evconsulting.am](http://www.evconsulting.am)

Զրոսաշրջության համաշխարհային շուկայում Հայաստանի մրցունակության վերաբերյալ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է դիտարկել մրցակցային դիրքերի վերաբերյալ վերլուծությունը, որը մատնանշում է այն ոլորտները, որոնց վրա պետք է մեծ ուշադրություն դարձնել: Այս առումով, հարկ է Հայաստանի դիրքերը համեմատել այլ երկրների, մասնավորապես՝ Արևելյան Եվրոպայի, ԱՊՀ և Սիրիան Արևելքի երկրների հետ (գծապատկեր 2):



**Գծապատկեր 2. Զրոսաշրջության մրցունակության համարիվ համապեկի երկրներում**

Հայաստանը զիջում է Արևելյան Եվրոպայի և Սիրիան Արևելքի բոլոր երկրներին (բացառությամբ՝ Սիրիայի): ԱՊՀ երկրների շարքում Հայաստանը 5-րդն է՝ զիջելով Ռուսաստանին (59), Վրաստանին (73), Ադրբեյչանին (83) և Ուկրաինային (85)<sup>3</sup>:

Ըստ զրոսաշրջության կանոնակարգման դաշտի ենթահամարվի՝ Արևելյան Եվրոպայի առաջատարը Էստոնիան է, որին հետևում են Հունգարիան և Չեխիան: Հայաստանը հետ է մնում այս տարածաշրջանի բոլոր երկրներից:


ԱՊՀ երկրների շարքում Հայաստանը զիջում է միայն Վրաստանին: Սիրիան Արևելքի երկրների մեջ Հայաստանն առաջ է Սիրիայից և Թուրքիայից (գծապատկեր 3)<sup>4</sup>:

Հայաստանում վիճակը համեմատաբար բարվոր է ապահովության և անվտանգության, ինչպես նաև սանհիտարահիգիենիկ պայմանների և առողջապահության առումներով (30-րդ տեղ), սակայն դեռևս լուրջ խնդիր է շրջակա միջավայրի պաշտպանությունը (111-րդ տեղ): Հայաստանի դիրքի վրա բացասաբար են ազդել շրջակա միջավայրի օրենսդրության խստության և կիրառման ցածր մակարդակը (120 և 126-րդ տեղեր), վիզայի պահանջմերը (126-րդ տեղ), շրջակա միջավայրին վերաբերող կոնվենցիա-

<sup>3</sup> Տե՛ս «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, մամուլի հաղորդագրություն, Եր., 7 մարտի 2011 թ., էջ 7:

<sup>4</sup> Հայաստանն ըստ 2011 թ. զրոսաշրջության մրցունակության զեկույցի, «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, մամուլի հաղորդագրություն, էջ 8:

Աներին ոչ ակտիվ մասնակցությունը (108-րդ տեղ), ուստիկանության վստահելիության ցածր աստիճանը (112-րդ տեղ) և օդային հաղորդակցության բնագավառում երկկողմ համաձայնագրերի սակավությունը (91-րդ տեղ): Էական բարելավում է արձանագրվել պետական քաղաքականության բափանցիկության բարձրացման ցուցանիշի առումով (103-րդից՝ 53-րդ տեղ)<sup>5</sup>:



**Գծապատկեր 3. Զրուսաշրջության կանոնակարգման դաշտի ենթահամարիվ համադրելի երկրներում<sup>6</sup>**


Ըստ զրուսաշրջության գործարար միջավայրի և ենթակառուցվածքի ենթահամարվի՝ Հայաստանը բավականին բույլ դիրք է զբաղեցնում՝ 100-րդ տեղը՝ մեծ շափով զիջելով Արևելյան Եվրոպայի և Միջին Արևելքի տարածաշրջանի երկրներին (բացառությամբ՝ Սիրիայի): ԱՊՀ երկրների շարքում Հայաստանն առաջ է միայն Տաջիկաստանից և Ղրղզստանից: Արևելյան Եվրոպայի երկրների մեջ առաջատարը Էստոնիան է, ինչը պայմանավորված է իհմնականում զրուսաշրջության, տեղեկատվական, հեռահաղորդակցման տեխնոլոգիաների և վերգետնյա տրանսպորտի ենթակառուցվածքների զարգացման մակարդակով: ԱՊՀ երկրների մեջ առաջատար դիրքեր են զբաղեցնում Ռուսաստանը, Ռուսահնան, Աղրբեջանը: Իսրայելն առաջատար է Միջին Արևելքի երկրների շարքում, մասնավորապես՝ զարգացած տեղեկատվական հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ենթակառուցվածքի զարգացման շնորհիվ:

Հայաստանի դիրքը զրուսաշրջության գործարար միջավայրի և ենթակառուցվածքի ենթահամարվի առումով բարելավվել է 5 տեղով՝ նախորդ տարվա համեմատությամբ (105-րդ տեղ):<sup>7</sup> Դրան էապես նպաստել է զրուսաշրջության ենթակառուցվածքների հենասյուների գնահատականների բարձրացումը: Ըստ գեկույցի՝ այսուղղ Հայաստանի միակ առավելությունը զրուսաշրջության ոլորտի գնային մրցունակությունն է (61-րդ տեղ), որը, սակայն, նվազել է նախորդ տարվա համեմատությամբ: Մեր երկիրն էապես զիջել է դիրքերն ըստ հյուրանոցների գների (64-րդից՝ 82-րդ տեղ), վերգետնյա ճանապարհային ցանցի որակի (60-րդից՝ 81-րդ տեղ) համարվերի:

<sup>5</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 10:


<sup>6</sup> Նոյն տեղում:

<sup>7</sup> Տե՛ս 2010 թ. զրուսաշրջության մրցունակության գեկույց, մամուլի հաղորդագրություն:



**Գծապատկեր 4. Զրուսաշրջության գործարար միջավայրի և ենթակառուցվածքի ենթահամարիվ համարելի երկրթերում<sup>8</sup>**

Ուշագրավ է մերենաների վարձույթով զբաղվող միջազգային հայտնի ընկերությունների ներկայության համարվի բարելավումը (95-րդից՝ 80-րդ տեղ): ՀՀ-ն այլ երկրների զիջում է տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ցածր մակարդակի պատճառով: Օդային և վերգետնյա տրանսպորտի ենթակառուցվածքը թեև նախորդ տարվա համեմատությամբ որոշակի առաջննթաց է գրանցել, սակայն համարվում է մեր երկրի մրցակցային բույլ օդակը:



**Գծապատկեր 5. Զրուսաշրջության մարդկային, մշակութային և բնական ռեսուրսների ենթահամարիվ համարելի երկրթերում<sup>9</sup>**

Ըստ զրուսաշրջության մարդկային, մշակութային և բնական ռեսուրսների համարվի՝ Արևելյան Եվրոպայի առաջատարը Չեխիան է: Հայաստանը զիջում է այս տարածաշրջանի բոլոր երկրներին: ԱՊՀ երկրների

<sup>8</sup> Նոյյն տեղում:

<sup>9</sup> Հայաստանն ըստ 2011 թ. զրուսաշրջության մրցունակության զեկույցի, «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, մամուլի հաղորդագրություն, էջ 11:

շարքում մեր հանրապետությունը զիջում է Ռուսաստանին, Վրաստանին, Ղրղզստանին և Ադրբեյջանին: Միջին Արևելքում հետ է մնում տարածաշրջանի բոլոր երկրներից (քաջի Սիրիայից):

Զրուաշրջության մարդկային, մշակութային և բնական ռեսուրսների առումով Հայաստանի դիրքն իջել է 5 տեղով (2010 թ. տվյալներով՝ 105-րդ տեղ)<sup>10</sup>: Մեր մրցակցային առավելություններից է բնակչության բարյացակամ և բարեհամրույր վերաբերմունքն օտարերկրյա այցելուների նկատմամբ (33-րդ տեղ): Դրանով հանդերձ, սակայն, այս տարի էական հետընթաց է արձանագրվել գործարար այցելությունների ընթացքում հարակից զրուաշրջային ծառայությունների առաջարկի մասով (31-ից՝ 61-րդ տեղ): Աշխատաշուկայի ճկունության շնորհիվ (աշխատանքի ընդունման և ազատման դյուրինություն) շարունակում է բարձր մակարդակի վրա մնալ մարդկային ռեսուրսների օգտագործմանն առնչվող մրցունակությունը: Այսուհետերձ, լուրջ խնդիր է աշխատուժի կրթման և զարգացման ենթակառուցվածքի զարգացումը: Մի կողմից՝ կրթական հաստատությունները չեն կարողանում համապատասխան որակավորմամբ մասնագետներ ապահովել (կրթական համակարգի որակով Հայաստանը զբաղեցնում է 115-րդ, իսկ վերապատրաստման և հետազոտական ծառայությունների հասանելիությամբ՝ 124-րդ տեղերը), մյուս կողմից՝ ընկերությունները բավարար ներդրումներ չեն կատարում աշխատակիցների վերապատրաստման նպատակով (116-րդ տեղը):

Այսպիսով՝ հստակ երևում է, որ Հայաստանի դիրքը տարածաշրջանում այնքան էլ մրցունակ չէ, ինչը պահանջում է զրուաշրջային արդյունքի բացահայտմանը և բարելավմանը միտված միջոցառումների իրականացում:

Կարելի է առանձնացնել գործուների հիմնական խմբեր, որոնցով պայմանավորված է զրուաշրջության զարգացումը ՀՀ-ում: Դրանք են՝ ենթակառուցվածքներ, բնական, մշակութային ռեսուրսներ և բնապահպանություն, առողջապահություն և անվտանգություն, գործարար և ներդրումային միջավայր, քաղաքական և տնտեսական կայունություն, զրուաշրջության արդյունքի բարելավում: Փաստենք, որ հյուրընկալության ոլորտի զարգացումը, որպես հիմնարար տարր, նույնպես մեծ նշանակություն ունի ՀՀ զրուաշրջության զարգացման համար: Հյուրանոցային տնտեսության օբյեկտները զրուաշրջային փաքեթների հիմնական մասն են կազմում և զրուաշրջիկների համար առաջնային են համարվում: Դրանք գնային և որակական հատկանիշներով պետք է ներդաշնակ լինեն և բավարարեն զրուաշրջիկի պահանջմունքները՝ արդարացնելով սպասելիքները:

Հյուրանոցային տնտեսության օբյեկտները բազմաթիվ են և տարաբնույթ: Ըստ «Զրուաշրջության և զրուաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ հյուրանոցային օբյեկտների բվին են դասվում՝ հյուրանոցները, մոբելները, հյուրանոցատիպ հանգիւանները, առողջարանները, հանգստյան և մասնագիտացված ճամբարները կամ տները, զրուաշրջա-

<sup>10</sup> Տես 2010 թ. զրուաշրջության մրցունակության գեկույց:

յին, մանկապատաճեկան և ճամբարային քնակատեղիները (համալիրներ)՝<sup>11</sup>:

Այժմ Հայաստանում համաշխարհային հյուրանոցային տնտեսության հայտնի օբյեկտներից շատ քչերն են գործում: Թերևս կարելի է առանձնացնել միայն «Արմենիա Մարիոր», «Բեսք Վեսթերն Կոնզրես» և «Գոլդեն Թուլփ» հյուրանոցները:

Ավելի մեծ քվով հայտնի հյուրանոցային ցանցերին (օրինակ՝ «Շերատոն», «Հիլտոն», «Հայար») միասնացումը կնպաստի սպասարկման որակի նոր չափանիշների ներմուծմանը, և Հայաստան ավելի գրավիչ ու վստահություն ներշնչող կլինի օտարերկրյա գրոսաշրջիկների համար, ինչպես նաև առողջ մրցակցային միջավայր կստեղծվի տեղական շուկայում: Անհրաժեշտություն կա նաև մատչելի հյուրանոցային տնտեսության օբյեկտների հիմնադրման և ընդլայնման («Հոլիդեյս Ինն», «Իբիս»), սեփական հյուրընկալության ապրանքանիշի (բրենդի) ձևավորման, որը միջազգային շուկայում կիրառվի որպես էկզոտիկ արդյունք: Հայաստանյան շուկայում դրա լավագույն օրինակը «Թուֆենկյան Ժառանգություն» հյուրանոցային ցանցն է:

Մեր երկրում գոյություն ունեցող քազմաթիվ հյուրանոցներից և առողջարաններից քչերն են համապատասխանում միջազգային չափանիշներին: Խորհրդային ժամանակաշրջանում կառուցվածքներն այլև չեն բավարարում ժամանակակից պայմանները, իսկ դրանց վերափոխումը հսկայական ֆինանսական միջոցներ է պահանջում:

Այս խնդրի լուծումը հատկապես հրատապ է Երևանից դրւս գործող հաստատությունների համար: Զրոսաշրջության կենտրոններում առկա են բակառուցվածքները հնացել են, իսկ մատուցվող ծառայությունները ցածր որակ են: Միջազգային չափանիշներին համապատասխանող հյուրանոցները հիմնականում կենտրոնացված են Երևանում, մասամբ՝ գրոսաշրջային կենտրոն համարվող մյուս քաղաքներում (Ծաղկաձոր, Դիլիջան, Ջերմուկ):

Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2012 թ. հունվար-մարտին համբարագետության տարածքում տեղաբաշխված կոլեկտիվ և անհատական տեղավորման կացարաններում հանգրվանել է 45223 գրոսաշրջիկ (ՀՀ ռեզիդենտներ). այս ցուցանիշը 2011 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 20.3%-ով՝<sup>12</sup>:

Հայաստանում ներկայումս սուր խնդիր է ոչ այնքան հյուրանոցային տեղերի սահմանափակությունը, որքան դրանց ոչ ճիշտ տեղաբաշխվածությունն ու անհամապատասխանությունը միջազգային չափանիշներին:

Հյուրանոցների և հյուրանոցային տների առաջարկած պայմանները և սպասարկման որակը մեզանում հաճախ չեն համապատասխանում սահմանված գներին: Տարածաշրջանում մրցունակ գին ձևավորելու համար պետությունը մրցակցային առողջ միջավայր ստեղծելուն նպատակառության մեջ միջոցառումներ պետք է իրականացնի:

<sup>11</sup> Տե՛ս «Զրոսաշրջության և գրոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 6/305, Եր., 2004:

<sup>12</sup> Տե՛ս [www.armstat.am](http://www.armstat.am), ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թ. հունվար-ապրիլին, տեղեկատվական ամսական գեկույց, ՀՀ ԱՎԾ, Եր., 2012:

Զրուաշրջության զարգացման ժամանակակից մակարդակին մոտենալու և համաշխարհային շուկա դուրս գալու համար անհրաժեշտ է հսկայական աշխատանք կատարել տնտեսության բոլոր ոլորտներում և տարրերու ուղղություններով: Առկա հիմնախնդիրները մեր հանրապետությունում այնքան բազմազան ու մեծաքիչ են, որ առանց համալիր մոտեցման անհնար է արդյունավետ լուծումներ գտնել:

### **НАРИНЕ ЭЛИЗБАРЯН**

*Финансовый менеджер  
холдинга „Armenian Hospitality“*

**Конкурентоспособность РА на мировом рынке туризма.-** Для понимания конкурентоспособности Армении, а также конкурентные позиции на мировом рынке туризма анализ показывает в каких областях внимание должно быть направлено. Для достижения современного уровня развития туризма на мировом рынке, огромная работа должна быть выполнена во всех областях нашей экономики. Тем не менее, эффективным подходом можно решать проблемы на рынке туризма РА.

### **NARINE ELIZBARYAN**

*Financial Manager at  
„Armenian Hospitality“ Holding LLC*

**The RA's Competitiveness in the Global Tourism Market.-** For understanding Armenia's competitiveness and also competitive position in global tourism market the analysis indicates to which areas attention should be paid. To achieve present-day level tourism development in the global market, huge work should be done in all fields of our economy. Nevertheless, it is possible to have solutions to all the problems in the RA tourism market applying a complex and effective approach.